ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ 15-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝
   1) Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի վոլեյբոլի 2011թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
   2) Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի վոլեյբոլի 2011 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
   3) Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի վոլեյբոլի 2011 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման մարզային փուլի մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.
   4) Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի վոլեյբոլի 2011 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման տարածքային փուլի կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 4 հավելվածի:
2. Կազմկոմիտեին /նախագահ Գ. Բադալյան/՝
   1) ապահովել մրցումների անցկացման մասսայականությունը.
   2) կազմակերպել մրցումների մարզային փուլի բացման և փակման հանդիսավոր արարողություն.
   3) մրցումների ավարտից հետո ներկայացնել գրավոր հաշվետվություն:
2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանին՝ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզի վոլեյբոլի 2011 թվականի մարզային առաջնության մարզային փուլի մրցումներն ապահովելու նպատակով տրամադրել ֆինանսական միջոցներ՝ համաձայն N 5 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ